ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. նոյեմբերի 19-ից 20-ը Վրաստան (ք. Թբիլիսի)
կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

   Պապին Գալստյան
   Արայիկ Ստեփանյան
   Նվարդ Մանուկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ**

   Համապատասխանաբար՝
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ,
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ,
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ:

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Վրաստան, ք. Թբիլիսի, 2025 թվականի նոյեմբերի 19-ից 20-ը:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ):

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Գործուղումը իրականացվում է Սևծովյան հարթակի տարեկան համաժողովի շրջանակում «Արևելյան գործընկերության երկրների և ԵՄ-ի միջև կայուն և թվային առևտրային ուղիների և լոգիստիկ հայեցակարգերի ամրապնդում» խորագրով տարածաշրջանային նախագծի քննարկմանը մասնակցելու նպատակով:

   Հաշվի առնելով «Խաղաղության խաչմերուկ» նախագծի իրականացման տրանսպորտային-լոգիստիկ հնարավորությունների և Թրամփի ուղու (Trump Route for International Peace and Prosperity) գործարկման հեռանկարները՝ գործուղման առանցքային նպատակն էր Հայաստանի Հանրապետության արտահանման 2025-2030 թվականների ռազմավարական ծրագրի շրջանակում գույքագրել աշխարհագրական դիրքից բխող ռազմավարական առավելությունների իրացման և տարածաշրջանային տրանսպորտային նախագծերին ինտեգրվելու միջոցով Հայաստանի Հանրապետության ներկայիս

սահմանափակ տարանցիկ ներուժն ընդլայնելու հնարավորությունները: Այս առումով հեռանկարային է «Խաղաղության խաչմերուկ» նախագծի իրականացման համատեքստում Թուրքիայի և Ադրբեջանի սահմանների ապաշրջափակման և Թրամփի ուղու (Trump Route for International Peace and Prosperity) գործարկման միջոցով Տրանսկասպյան (միջին) միջանցքին ինտեգրվելը, ինչը կարող է Հայաստանը դարձնել տարածաշրջանային հաղորդակցությունների խաչմերուկ և շահագրգիռ երկրներին առաջարկել Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա ցամաքային կամ դեպի Թուրքիայի նավահանգիստներ այլընտրանքային երթուղիներ:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Սևծովյան հարթակի տարեկան համաժողովի շրջանակում քննարկված թեմաներն են.

-Տրանսկասպյան (միջին) միջանցքի մարտահրավերները և հնարավորությունները,

-Տրանսկասպյան (միջին) միջանցքը Կենտրոնական Ասիան ԵՄ-ի հետ կապող կայուն առևտրային ուղի դարձնելու, գործողությունները թվային իրականացնելու և ենթակառուցվածքների ընդլայման միջոցով բեռնափոխադրումների ժամկետները կրճատելու հնարավորությունները,

-Տրանսկասպյան (միջին) միջանցքի տրանսպորտային-լոգիստիկ ենթակառուցվածքների ներկայիս վիճակը և զարգացման հետագա հնարավորությունները,

-Տրանսկասպյան (միջին) միջանցքի լոգիստիկ ենթակառուցվածքներում բիզնես-ներդրումային ծրագրերը,

-Տրանսկասպյան (միջին) միջանցքով բեռնափոխադրումների փորձագիտական հետազոտությունները:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպմանը մասնակցում էին և ծրագրային ելույթներ ունենում ԵՄ-Վրաստան գործարար խորհրդի գլխավոր քարտուղարը, որը միաժամանակ Սևծովյան հարթակի համահիմնադիրներից է, Հարավային Կովկասի Համաշխարհային բանկի տարածաշրջանային տնօրենը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) Կովկասի տարածաշրջանային տնօրենը, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) տարածաշրջանային ներկայացուցիչները, Վրաստանում Բուլղարիայի, Ռումինիայի դեսպանները և Վրաստանում ԱՄՆ-ի և Ուկրաինայի դեսպանությունների գործերի ժամանակավոր հավատարմատարները,

Վրաստանում Բուլղարիայի դեսպան Վեսելին Պետրով Վալկանովը Տրանսկասպյան միջանցքը դիտարկեց Ռուսաստանից ստրատեգիական կախվածությունը նվազեցնելու գործոն և կարևորեց սույն գործընթացին մասնակից երկրների միջև տնտեսական կապերի ամրապնդման ուղղությամբ իրականացվող գործընթացները, հատկապես նշելով, որ աջակցում են Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատումը, ողջունում են «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը և նրա ընձեռած հնարավորությունները տնտեսական համագործակցության պրոցեսին երկու երկրների ներգրավմանը:

Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Ալան Պուրսելը նշեց, որ ԱՄՆ-ը հիսուն միլիոն դոլլար է ներդրել Վրաստանում նավահանգստային ենթակառուցվածքների արդիականացման նպատակով և որը նպաստելու է Միջին Միջանցքի զարգացմանը և հույս հայտնեց, որ Տրանսկասպյան համագործակցությունը ուժեղացնելու է նաև ԱՄՆ-ի տնտեսական ներուժը և ներկայացվածությունը տարածաշրջանում: Նա միաժամանակ բարձր գնահատեց ԱՄՆ-ի նախագահի դերը տարածաշրջանային կայունության հաստատման և համագործակցության զարգացման գործում:

Վրաստանում Ուկրաինայի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար պարոն Ռոման Յակովենկոն Տրանսկասպյան միջանցքի կայացումը մեկնաբանեց որպես Ուկրաինայի վրա Ռուսաստանի հարձակման հետևանքով Սևծովյան տարածաշրջանում առևտրի և կայունության խափանումը չեզոքացնելու գործոն, ինչը միաժամանակ բնութագրեց աշխարհաքաղաքական գործոն՝ Ռուսաստանից էներգետիկ կախվածությունը վերացնելու կարևոր բաղադրիչ:

Ադրբեջանի ներկայացուցիչը ներկայացրեց Բաքու քաղաքին հարակից Ալատ ազատ տնտեսական գոտու վերաբերյալ տեղեկատվություն առ այն, որ այն զբաղեցնում է մոտ 10 հա տարածք և ունի հետագա ընդլայնման հնարավորություն, կահավորված է բոլոր տեսակների բեռների պահպանման և փոխադրման հնարավորություններով:

Վրաստանի կողմից Տրանսկասպյան երթուղու կայացման ուղղությամբ իրականացվող միջոցառումների և ներդրումային ծրագրերի մասին ներկայացրին Փոթի նավահանգստի առևտրային տնօրենը և Թբիլիսիի չոր նավահանգստի գլխավոր տնօրենը: Մասնավորապես՝ Փոթիում բեռնափոխադրումների ժամկետների կրճատման և տրանսպորտային հոսքերի օպտիմալացման նպատակով պլանավորվում է ընդլայնել նավահանգիստը, կառուցել բարձման բեռնաթափման նոր տերմինալներ: Թբիլիսիի չոր նավահանգիստը, որը ստեղծվել է 2021 թվականին, գտնվում է Միջին միջին միջանցքի կենտրոնում և հանդիսանում է սևծովյան նավահանգիստների ցամաքային շարունակությունը: Այնտեղ մատուցվում են նաև մաքսային

ծառայություններ, առկա են բեռների պահպանման պահեստներ, ընդունում և սպասարկում է ինչպես երկաթուղային տրանսպորտով, այնպես էլ ավտոմոբիլայինով փոխադրվող ցանկացած ծավալի բեռներ:

Տրանսկասպյան միջանցքի ներդրումային ծրագրերի և հետագա զարգացման վերաբերյալ քննարկումների ընթացքում փորձագետը ներկայացրեց հետազոտություններ՝ միջանցքով բեռնափոխադրումների ծավալների և այդ ծավալները ավելացնելու հնարավորությունների մասին: Մասնավորապես նշվեց, որ ներկայումս միջանցքին ինտեգրված Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին շահագործվում է հնարավորությունների 5 տոկոսի չափով: Ադրբեջանի ներկայացուցիչը հետաքրքրվեց պատճառների մասին, որին փորձագետը պատասխանեց, որ նվազ ծավալների պատճառը բեռների սակավությունն է և Կարս երկաթուղային հանգույցում տեխնիկական սպասարկման անկատարությունը: Փորձագետները երթուղու հետագա զարգազման կարևոր բաղադրիչ են համարում մատուցվող ծառայությունների թվայնացման պրոցեսը:

Քննարկումների ընթացքում հրապարկվեց «Խաղաղության խաչմերուկ» նախագծի հեռանկարում Թուրքիայի և Ադրբեջանի հետ սահմանների ապաշրջափակման արդյունքում Հայաստանը որպես արդյունավետ տարանցիկ հանգույց դառնալու և Միջին միջանցքին ինտեգրվելու և Թուրքիայի տարածքով Կենտրոնական Ասիայից բեռները դեպի ԵՄ տարանցումն իրականացնելու հավակնությունների մասին: Մասնակիցները ողջունեցին ներկայացված հավակնոտ ծրագիրը, իսկ Փոթի նավահանգստի առևտրային տնօրենը կարծիք հայտնեց առ այն, որ եթե իրենք չզարգացնեն լոգիստիկ ենթակառուցվածքները, ներդրումներ չանեն և չկրճատեն փոխադրումների ժամկետները և կատարվող ծախսերը, ապա Հայաստանը կարող է լրացնել առաջացած դատարկությունը՝ որպես այլընտրանք առաջարկելով ավելի նպաստավոր պայմաններ:

Համաժողովի վերջին հատվածում Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի և Թուրքմենստանի բեռնափոխադրողների ասոցիացիաների ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց փոխադրողների կողմից միջանցքով իրականացվող փոխադրումների խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները:

8. <u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>

Համաժողովի ընթացքում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել: Մասնակիցները հավանություն տվեցին Տրանսկասպյան միջանցքը որպես աշխարհաքաղաքական այլընտրանք զարգացնելու սևծովյան հարթակի կողմից իրականացվող գործողություններին: Մասնակիցները պայմանավորվեցին ապահովել ներդրումային և բիզնես ծրագրերի շարունակականությունը, Միջին միջանցքը կայուն տարանցիկ ուղի և միաժամանակ հարավկովկասյան երկրների

Փոթի և Կոնստանցա նավահանգիստների, Թբիլիսիի չոր նավահանգիստի և Բաքվի ազատ տնտեսական գոտու ղեկավարները, լոգիստիկայի բնագավառի փորձագետներ և բիզնեսի ներկայացուցիչներ:

Ելույթ ունեցողները հիմնականում շեշտադրում էին Տրանսկասպյան կամ Միջին միջանցքի հնարավորությունները որպես.

- Կենտրոնական Ասիան և Սևծովյան տարածաշրջանը Եվրոպայի հետ կապող հիմնական և կարևորագույն երթուղի,
- Ուկրաինայի և Ռուսաստանի միջև ռազմական գործողությունների պատճառով Կենտրոնական Ասիայից դեպի Եվրոպա տրանսպորտային լոգիստիկ փակ ուղիների այլընտրանքային լուծում,
- Երթուղի, որը շրջանցում է Ռուսաստանը և վերացնում է Ռուսաստանից կախվածությունը,
- Երթուղի, որը նպաստելու է Սևծովյան տարածաշրջանի երկրների միջև տնտեսական համագործակցության և տնտեսական կապերի զարգացմանը, լոգիստիկ ենթակառուցվածքների ընդլայնմանը և հարավկովկասյան երկրների տնտեսական և քաղաքական մերձեցմանը:

Հարավային Կովկասի Համաշխարհային բանկի տարածաշրջանային տնօրեն Ռոլանդե Փրայսը իր ելույթում հատկապես ողջունեց Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատումը և կարևորեց Հայաստանի Հանրապետության համար տարածաշրջանային տրանսպորտային-լոգիստիկ նախագծերին ներգրավվման հնարավորությունները և կարևորեց Համաշխարհային բանկի աջակցությունը Հայաստանի տարածաշրջանային նախագծերին ինտեգրման գործընթացում:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) Կովկասի տարածաշրջանային տնօրեն Ալկիս Դրակինոսը նույնպես նշեց Հայաստանի և Ադրբեջանի հավակնոտ ծրագրերը՝ տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին մասնակցելու և Հարավային Կովկասի երկրների տնտեսական զարգացման և տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքների արդիականացման ուղղությամբ նախաձեռնություններին աջակցելու հնարավորությունները:

Արևելյան գործընկերության առևտրի և տրանսպորտի նախագծերի (GIZ) տնօրեն պարոն Տորբեն Հայնեմանը կարևորելով Տրանսկասպյան միջանցքը որպես Կենտրոնական Ասիան և Սևծովյան երկրները Եվրոպայի հետ կապող կարևորագույն միջանցք՝ միաժամանակ խաղաղության հաստատման պայմաններում տրանսպորտային կապերը մեկնաբանեց որպես լրացուցիչ բաղադրիչ՝ Հայաստանին և Ադրբեջանին մերձեցնելու և երկու երկրների միջև բացված պատուհանը ընդլայնելու միջոցով այն տարածաշրջանային գործոնի վերածելու համար:

միջև տնտեսական կապերի զարգացման և փոխշահավետ համագործակցության միջավայր դարձնելու ուղղությամբ:

Պ. Գալստյան

Ա. Ստեփանյան

Ն. Մանուկյան

25.11.2025թ.